ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԼԵՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Մասնակից՝ Խաթուն Գևորգյան

Դպրոց՝ Եղվարդի Համլետ Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

Վերապատրաստող՝ Թամարա Սիմոնյան

Կոտայք 2022

Բովանդակություն

Ներածություն 3
1. Ընթերցանությունը տարրական դասարաններում..... 5
2. Տարրական դասարաններում ընթերցանության դասերի կազմակերպման նպատակներն ու խնդիրները 12
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Մարդն իր ձևավորման և սոցիալականացման գործընթացում անընդհատ գտնվում է շրջակա միջավայրի հետ մշտական շփման և փոխազդեցությամ մեջ: Վերջինիս անընդհատ փոփոխությամբ պայմանավորված՝ ծագում են նորանոր խնդիրներ, պահանջմունքներ, հակասություններ: Եվ ստացվում է այնպես, որ մեր կյանքը կարգավորվում է հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքով, որի մեջ ծանրակշիռ դեր ունեն բարոյական արժեքներն ու չափորոշիչները, աշխարհընկալման և մտածելակերպի առանձնահատկությունները: Այս ամենի հիմքը դրվում է դեռ մանկական տարիքում և զարգացվում հետագայում դպրոցում՝ ուսումնառության ընթացքում:

Տարրական դասարաններում երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը և ինչը գրված է գրքում: Այն բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում և դպրոցում, դառնում են բարոյական համոզմունքներ, որոնք հետագայում ձևավորում են որոշակի վերաբերմունք իր և ուրիշների նկատմամբ:

Ասել է, թե ընթերցանությունը սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնական միջոցն է և տարրական դասարաններում այն համարվում է աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկ: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ժամանակակից դպրոցի առջև դրված արդիական խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում տարրական դասարաններում ընթերցանության կազմակերպման մեթոդիկայի, ընթերցանության անցկացման տեխնոլոգիաների, տարրական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ներարկման, դաստիարակության խնդիրները:

Արդիական համարելով այս խնդիրը՝ մեր աշխատանքով ***նպատակ*** ունենք տեսականորեն ուսումնասիրելով տարրական դպրոցում ընթերցանության նպատակներն ու խնդիրները /մեթոդիկան/՝ ցույց տալ դրա դերն ու նշանակությունն անձի զարգացման և կայացման հետագա գործընթացում:

Մեր աշխատանքի նպատակից բխում են հետևյալ ***խնդիրները***, որոնց շուրջ էլ կատարել ենք ուսումնասիրությունը.

- Ուսումնասիրել ընթերցանության առանձնահատկությունները տարրական դասարաններում:
- Բացահայտել տարրական դասարաններում ընթերցանության կարևոր հատկանիշներն ու ազդեցությունը երեխաների անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացում:
- Առանձնացնել և ներկայացնել տարրական դասարաններում ընթերցանության նպատակներն ու խնդիրները:
- Ներկայացնել տարրական դասարաններում ընթերցանության անցկացման մեթոդիկան:

1. Ընթերցանությունը տարրական դասարաններում

Ընթերցանությունը տարրական դասարաններում անցկացվող դասընթացի հիմնական բաժիններից մեկն է, որն իրականացվում է մայրենի լեզվի միջոցով: Այն հանդիսանում է մայրենի լեզվով երևույթների մասին պատկերացումների և երևույթների ուսումնասիրման և յուրացման գործոն:

Ընթերցանությունը մայրենի լեզվի ուսուցումը ապահովում է կենդանի ու ճիշտ կառուցված խոսքի ընդօրինակումով: Իսկ դա հնարավորություն է տալիս « աստիճանաբար երեխաների մեջ լեզվական ձևերի. Օրենքների ու օրինաչափությունների այնպիսի տարերային կուտակում կատարել, որոնց վրա ուսուցչի ղեկավարությամբ ու օգնությամբ կատարված վերլուծությունների ու դիտումների շնորհիվբ աշակերտները պետք է հասնեն լեզվական այդ իրակությունների գիտակցմանը, լեզվի տրամաբանության ու քերականության ըմբռնմանը»[1]:

Մանկավարժներից շատերն են կարևորել ընթերցանության դերը, կարդալու կարողությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես ճանաչողական գիտելիքների հարստացման միջոց: Ուսուցման մեջ ամենահիմնական կողմերից մեկը Աբովյանը համարել է ինչպես ուսուցվող նյութի կամ կարդացվելիք բնագրի, այնպես էլ առհասարակ ուսուցման ողջ ընթացքի նկատմամբ աշակերտի ունենալիք գիտակցականվերաբերմունքի մշակումը: Իսկ դրան հասնելու համար, նրա կարծիքով, աշակերտիհամար ոչ մի մութու անհասկանալի բան չպետք է թողնել, ամեն ինչ նրան մատչելի,հետաքրքիր ու հասկանալի պետք է դարձնել: Այս կապակցությամբ էլ Աբովյանն առաջ է քաշել ընթերցանության դասերին բացատրություններ և մեկնաբանություններ տալու անհրաժեշտությունը, որպես յուրացումը հեշտացնող,կարդալը գիտակցական դարձնող միջոցի: «Ձեզ համար սուրբ օրենք շինեցեք մեկ բառ, մեկ խոսք չի կարդալ առանց միտք իմանալու, չեք գիտում, հարցրեք»[2]:

Բառն այն ժամանակ էր Աբովյանը յուրացված համարում, երբ աշակերտը ոչ միայն բացատրում էր այն ու մեկնաբա նում, այլև կիրառում իր խոսքի մեջ, իսկ սա տվյալ հարցի միանգամայն ժամանակակից մոտեցում է:

---

[1] **Ա. Տեր-Գրիգորյան**, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 143:
[2] **Խ . Աբովյան,** Երկերի լիակատար ժողովածու, հ.5, Երևան, 1950, էջ 185:

Հաշվի առնելով իր ժամանակի արևմտաեվրոպական առաջավոր մանկավարժության դիդակտիկական սկզբունքները՝ Աբովյանը լեզվի ուսուցումն անխզելիորեն կապում էր շրջապատի առաջկաների ու երևույթների ուսումնասիրության հետ, իսկ աշակերտի խոսքի զարգացումը՝ նրա դիտողականության, ճանաչողության ու մտածողության զարգացման հետ՝ հանձնարարելով «ջանք անել էապես ամեն բանի վրա մտածելու»:

Աբովյանը լուրջ ուշադրություն է դարձրել նաև երեխաների մեջ կարդալու տեխնիկայի մշակման հարցերին: Նա ուսուցիչներին խորհուրդ էր տալիս՝ երեխաներին սովորեցնել կարդալ պարզ, դանդաղ և իրենց բնական ձայնով և ոչ երգելով:

Ղ. Աղայանը ևս Աբովյանի նման այն կարծիքին էր, որ եթե մայրենի լեզվի ուսուցման ընթացքում երեխան բառերի իմաստները չընկալի, չհասկանա իր կարդացածը, ապա չի սովորի իր մայրենի լեզուն: Պետք է հասնել կարդացածի լրիվ յուացմանը. «Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը,- ասում էր նա,- այլև իրերը, առարկաները և նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը»[3]:

Մայրենի լեզվի զարգացմանը նպաստում է ընթերցանությունը: Ա. Բահրաթյանի կարծիքով՝ մայրենի լեզվի ուսուցման ճիշտ ու արդյունավետ միջոցներով է պայմանավորված երեխայի՝ մայրենի լեզվի զարգացման աստիճանը: Մանկավարժը լեզվի զարգացման հիմքում դնում էր լեզվի ու մտածողության անխզելի կապը: Այդ պատճառով մայրենի լեզվի զարգացումը պետք էր իրագործել երկու ճանապարհով՝ մտածելու և խոսելու: Կարդալով մարդը ոչ միայն բառեր է սովորում, այլև մտածում է:

Բահաթրյանը մայրենի լեզվի ուսուցման մեջ բացառիկ կարևոր տեղ էր հատկացնում աշակերտների բանավոր խոսքի մշակմանը՝ այն համարելով մայրենի լեզվի ուսուցման հիմքը: Բանավոր խոսքի մշակման և զարգացման համար որպես կարևոր միջոցներ առաջարկել է ինքնուրույն ընթերցանության հետ կապված բացատրություններ և մեկնաբանություններ:

Ա. Տեր-Գրիգորյանը, Ջ. Գյուլամիրյանը, Ս. Գյուլբուդաղյանը և ուրիշներ ևս «Մայրենիի» դասընթացում կարևոր դեր են հատկացրել ընթերցանության ժամերին:

---

[3] **Ղ. Աղայան**, Երկեր, հ. 4, Երևան, 1940, էջ 131:

Ըստ Ա. Տեր-Գրիգորյանի՝ ընթերցանությունը ոչ միայն նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը, այլև ճանաչողական գիտելիքների հարստացմանն ու աշակերտների դաստիարակությանը[4]:

Հարկ է նկատել, որ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունը զարգանում է անհատական և խմբային ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառմամբ, որոնք նրանք կատարում են տանը և դպրոցում: Այդ ընթացքում ուսուցչի հիմնական գործառույթը սովորողների ինքնուրույն ճանաչողական գործառույթների կառավարումն է: Աշակերտների մտավոր գործունեության հարցում շերտավորումն արդյունավետության տեսակետից ենթադրում է տարաբնույթ աշխատանքներ, որոնք էլ հնարավորություն կտան ինքնուրույն աշխատանքներ ծավալելու՝ անաչառ գնահատելով սեփական ուժերն ու ունակությունները:

Կրտսեր դպրոցական տարիքը հատկապես այն շրջանն է, երբ երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը, կամ ինչ գրված է գրքերում: Երեխաների բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում, մանկավարժական գործունեության միջոցով դառնում են համոզմունք: Այսպես՝ սովորողի մոտ ձևավորվում են բարոյական համոզմունքներն ու ճանաչողական ունակությունները:

Մանկավարժական գրականության մեջ նշվում է. «Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և նպատակային կազմակերպում»[5]: Այդ տեսանկյունից կարևորվում են ինքնուրույն ընթերցանության մեթոդական շղթան, կարդալու կարողությունների զարգացման քայլաշարը:

Ընթերցանության մեթոդիկայի պատմության համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ դեռևս հնում երեխաներին սովորեցնում էին կարդալ ու գրել, ընդ որում՝ հիմնականում կրոնական բովանդակություն ունեցող եկեղեցական գրքերի վրա, որոնք թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ լեզվական ձևով խորթ ու անհասկանալի էին նրանց: Հետագայում արդեն երեխաների հետաքրքրություններին ու

---

[4] **Ա. Տեր-Գրիգորյան**, Հայոց լեզվի մեթոդիկա, էջ 142-145:

[5] **Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

ըմբռնումներին համապատասխանող ընթերցարաններ ստեղծելու պահանջը ծագեց Գերմանիայում՝ 18- րդ դարի սկզբերին, սակայն այդ տիպի առաջին դասագիրքը ստեղծվեց 1776 թվականին միայն՝ Է. Ռոխովի կողմից: Նրա «Մանուկների բարեկամ» ընթերցարանը, որում զետեղված էին 79 ինքնուրույն նյութեր՝ աշխարհիկ բովանդակություն ունեցող հոդվածներ, պատմվածքներ, խրատներ, երգեր, աղոթքներ ու առածներ, կարճ ժամանակում լայն տարածում գտավ և բազմաթիվ հրատարակություններ և հետևորդներ ունեցավ եվրոպական շատ երկրներում:[6]

Ընթերցանության մեջ են ամփոփվում ու նրա միջոցով են իրականացվում տարրական դասաններում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի ձևավորման և զարգացման, գործնական ճանապարհով լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները: Հենց այդ նկատառումներով բոլոր ժամանակներում դասարանական ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկն է համարվել:

Ընթերցանության ամենակարևոր նպատակներից մեկը երեխաների մտավոր զարգացումն է, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ միայն պետք է նպաստեն աշակերտների կրթական մակարդակի բարձրացմանը, այլ նաև նրանց պետք է նախապատրաստեն ավելի բարձր դասարաններում ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն անցնելու: Ընթերցանությունն ըստ էության հոգեկան մի բարդ գործողություն է, որի վերլուծությունը կօգնի ոչ միայն ճիշտ ըմբռնելու այդ մտավոր գործողության առանձին բաղադրամասերն ու դրանց փոխադարձ կապը, այլև դրանց ուսուցողական դժվարությունները և կարդալու ուսուցման ճիշտ կազմակերպման գիտական հիմունքները:

Ինչպես գիտենք, տարրական դասարաններում ընթերցանության կազմակերպման ողջ <<բեռն>> ընկած է մայրենի լեզվի դասընթացի վրա: Հենց մայրենի լեզվի դասընթացի կարևոր բաղադրիչն է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու

---

[6] Ս. Գ. Խաչատրյան լեզվական գիտելիքների ուսուցումը տարրական դասարաններում՝ ըստ ծրագրային պահանջի

կարողությունները, հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել արժեքների համակարգ:

Ընթերցանության դասերին երեխաներին գործնական կերպով մայրենի լեզու սովորեցնելիս հաշվի է առնվում, որ լեզուն և միտքը, բառը և իմաստը անխզելի միասություն են կազմում և, որ չկա լեզու մտքից անկախ և չկա բառ՝ իմաստից անկախ, որ լեզուն հենց այնքանով է արժեքավոր, որքանով որ այն մտքի արտահայտությունն է, բառը՝ այնքանով, որ որևէ կոնկրետ իմաստ է արտահայտում, ցույց է տալիս օբյեկտիվ աշխարհի օրենքներն ու հարաբերությունները: Ընթերցանությունը ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակման միջոց է, այլև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման, համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսումնասիրության այս առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու պահանջները, որոնք հիմնականում կապվում են դասարանական ընթերցանության հետ.

1. Տալ աշխարհաճանաչման տարրական տեղեկություններ շրջապատի բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին:

2. Տարրական դասանների երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով:

3. Գործնական եղանակով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնելով երեխաների բառապաշարը, մշակել և զարգացնել երեխաների լեզվական կարողությունները:

4. Իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիրարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված կարևոր խնդիրները:

Ընթերցանությունը նպաստում է մայրենի լեզվի ուսուցմանը նաև նրանով, որ ապահովում է կենդանի, գեղեցիկ ու ճիշտ կառուցված խոսքի ընդօրինակում և յուրացում:

Ղեկավարվելով մայրենի լեզվի ծրագրով և օգտագործելով ընթերցարանների գործնական նյութերը՝ ուսուցիչը բացատրական ընթերցանության միջոցով աշակերտներին զինում է շրջապատի բնական ու հասարակական երևույթների ճիշտ ճանաչողությամբ, ռեալ ու բազմակողմանի տեղեկություններ է տալիս կյանքի մասին: Իսկ գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ մշակում է գեղարվեստական ճաշակ, սեր դեպի գեղեցիկն ու լավը, մշակում է ազնիվ ու բարի հակումներ, վեհ ու խորապես մարդկային զգացմունքներ: Թե՛ մեկ և թե՛ մյուս տիպի նյութերի միջոցով կրտսեր դպրոցականի մեջ մշակում է լեզվական բարձր մշակույթ, որպեսզի նրանք կարողանան իրենց տեսածն ու լսածը, իրենց խոհերն ու ապրումները պարզ, հստակ, մաքուր ու գեղեցիկ հայերենով և տրամաբանված ձևով արտահայտել: Համառոտ սրանք են այն նպատակներն ու խնդիրները, որ ունի դասարանական ընթերցանությունը դպրոցում: Նշենք, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում: Այդ աշխատանքը պետք է սկսել՝ աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝ շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն:

Նշենք, որ տարրական դասարանում մայրենի լեզվի դասընթացը բաժանվում է երկու բաժինների՝ լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ: Ե՛վ նախագիտելիքները, և՛ լեզվական տարրական գիտելիքները անցնում ենք համակցված ձևով, ընթերցանության հետ համատեղ: Կարծում ենք, որ տեղին է նկատել պրոֆ. Ա.Ե. Տեր-Գրիգորյանը՝ ասելով. «Մայրենի լեզվի տարրական դասընթացը քերա- կանական նյութերը վերցնելիս աչքի առաջ է ունենում աշակերտների ընդունա- կություններն ու ընկալման հնարավորությունները, նրանց լեզվական պաշարը և ուսուցանելիք նյութերի գործնական արժեքը…»:[7]

Այսպիսով, տարրական դասարանում ընթերցանության կազմակերպման առանձնահատկությունները կապված են փուլային մեթոդով անցկացման եղանակի հետ: Այսինքն, դեռևս առաջին դասարանում աշակերտներն ուսումնասիրում են լեզվի հնչյունաշարը (այբուբենը), տարբերակում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոշ չափով ծանոթանում դրանց ուղղագրությանը, որն ամրապնդվում է հաջորդ դասարաններում: Դրան պետք է ավելացնել մեծատառերի ուղղագրության

[7] Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980թ., 317 էջ:

վերաբերյալ այբբենական մասում անցածը, պետք է առաջադրվի նաև բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող կամ գրությամբ ու արտասանությամբ տարբերվող բառացանկ՝ ուսուցանելով զուտ գործնական ճանապարհով, առանց կանոնարկման: Արդեն երկրորդ դասարանում դասագրքերը կազմված են լինում թեմատիկ խմբավորման սկզբունքով և ընդգրկում են կրտսեր դպրոցականների աշխարհընկալմանը համապատասխան նյութեր՝ նպատակ ունենալով դաստիարակել, զարգացնել կրտսեր դպրոցականի երևակայությունը, մտածողությունը, խոսքը, կարդալու կարողությունը, ձևավորել ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես ու մարմնապես առողջ անձ: Երրորդ դասարանում արդեն սկսում են անցնել ուղղագրություն: Մայրենի լեզվի տարրական դասընթացի առանցքային հարցերից մեկը ուղղագրության ուսուցումն է: Երրորդ դասարանում պետք է կրկնել մինչև այդ անցած քերականական, հնչյունային ուղղագրությանը վերաբերող բառերը՝ զգալի ավելացումով: Այս դասարանում ևս գրությամբ և արտասանությամբ տարբերվող բա- ռերի ցանկը պետք է ավելացնել՝ դրանց ուղղագրությունը գործնական ճանապարհով սովորեցնելու պայմանով, հաճախակի կրկնելու և փոքրիկ բառախմբերով առաջադրելու ձևով:

2. Տարրական դասարաններում ընթերցանության դասերի կազմակերպման նպատակներն ու խնդիրները

Ընդհանուր մանկավարժության տեսության մեջ առանձնահատուկ ուսումնասիրման են արժանացել մանկավարժական մեթոդիկան, տեխնոլոգիաների ընտրությունը, գիտելիքների և հմտությունների յուրացմանն ուղղված բոլոր մեթոդները: Անմասն չի նաև տարրական դպրոցում ընթերցանության անցկացման առանձնահատկությունների, նպատակների, խնդիրների հստակեցման և մշակման հարցը:

Նախ նշենք, որ ընթերցանությունը խիստ պայմանավորված է տվյալ կրթական հաստատության կողմից յուրացված ուսուցման նպատակով և մի դեպքում կարող է դիտվել որպես դասավանդման մեթոդ, իսկ մյուս դեպքում՝ որպես դասավանդման հնար: Սա է քննարկվում ժամանակակից մանկավարժական ուսումնասիրություններում և այս ուսումնասիրմանն են հանգում ընթերցանության նպատակների և խնդիրների հստակ մշակման և արդյունավետ անցկացման հիմնախնդիրները, որոնք խիստ փոխկապակցված են միմյանց:

Փաստենք որ տարրական դասարաններում ընթերցանության հատկանշական նպատակներից մեկը երեխաների մտավոր զարգացումն է, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ միայն պետք է նպաստեն երեխաների կրթական մակարդակի բարձրացմանը, այլ նաև պետք է նրանց նախապատրաստեն ավելի բարձր դասարաններում ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն անցնելու:

Ընթերցանության նպատակներից մեկն էլ մայրենի լեզվի բանավոր և գրավոր խոսքի գործական ուսուցումն է: Ընթերցանության դասերին երեխաներին գործնական կերպով մայրենի լեզու սովորեցնելիս խստորեն հաշվի է առնվում, որ լեզուն և միտքը, բառը և իմաստը անխզելի միասություն են կազմում, որ չկա լեզու մտքից անկախ և բառ՝ իմաստից անկախ, որ լեզուն հենց այնքանով է արժեքավոր, որքանով որ այն մտքի արտահայտությունն է, բառը՝ այնքանով, որ որևէ կոնկրետ իմաստ է արտահայտում, ցույց է տալիս օբյեկտիվ աշխարհի օրենքներն ու հարաբերությունները:

Ընթերցանությունը նպատակ ունի ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու

արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակել, այլև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման, համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողություններ ու հմտություններ մշակել և զարգացնել:

Ընթերցանության կազմակերպման նպատակների շարքում հարկ է նշել նաև խոսքի գիտակցական յուրացումն գործոնը: Բացատրենք այսպես. կարդալ՝ նշանակում է հասկանալ և ըմբռնել ստեղծագործության իմաստը, իսկ հասկանալով կարդալը հենց կրտսեր դպրոցի մայրենիի ուսուցման հիմնական նպատակներից մեկն է: Եվ ինչպես Ա. Ղարիբյանն է նշում. «Անհրաժեշտ է, որ աշակերտը առավելագույն չափով յուրացնի տեքստը՝ հասկանալով նրա բովանդակությունը, տեքստի ամեն մի հատվածը և հատվածի ամեն մի կապակցությունը: Այդ նպատակին հաջողությամբ ծառայում է արտահայտիչ կարդալը, ահա թե ինչու առաջին դասարանից անհրաժեշտ է աշակերտներին վարժեցնել հենց արտահայտիչ կարդալուն»: [8]

Լիովին համաձայնվելով ռուս հայտնի մանկավարժ, մեթոդիստ Վ.Գ. Գորեցկու հետ, նշենք, որ ասռանձնահատուկ նպատակ է համարվում երեխաների խոսքի հուզականության և զգացմունքայնության զարգացմանը: Վերջիններիս իրականացման ամենաբարենպաստ պայմանները ստեղծվում են գեղարվեստական ընթերցանության ժամանակ: Առհասարակ, հուզականությունը հոգեբանորեն բարդ երևույթ է, որ անկառավարելի է և որին հասնելու համար արհեստածին պայմաններ պետք չեն, այն պետք է ստեղծվի առանց կողնմնակի նպատակային ազդակների: Կրտսեր դպրոցականի հետ աշխատելիս գեղարվեստական ընթերցանության միջոցով պետք է հասնել այնպիսի հոգեբանական վիճակի, որը հնարավորություն կտա զգացմունքային վերաբերմունք արտահայտել: Ասել է, թե ընթերցանությունն արտահայտիչ է, երբ լսողին փոխանցվում է հեղինակի հույզերը և զգացմունքները, ստեղծում կենդանի տպավորություն շրջապատող իրականության մասին: Այս ամենին կարող են նպաստել տարբեր էքսկուրսիաները, բնության երևույթիների ուսումնասիրումը արտադասարանական պայմաններում՝ մանկավարժի մասնակցությամբ: [9]

---

[8] Ա. Ս. Ղարիբյան, Մեթոդական ուղեցույց: Հայոց լեզվի և գրական ընթերցանության մասին: (Դպրոցական գործի ղեկավարների համար): Եր. - 1944. - 29 էջ

[9] В.А.Левина «Когда маленький школьник становится большим читателем» М., 1994, 45 ст.

Ընթերցանության դասերին զուգահեռ երեխաների հետ տարվում է նաև հատուկ բառային աշխատանք, որն էլ իր հերթին նպատակ ունի ոչ միայն ճշտելու ու հետզհետե ընդարձակելու աշակերտի բառապաշարը և դրանով իսկ նպաստելու ընթերցած բնագրի յուրացմանը, այլ նաև՝ բառապաշարի հարստացմամբ ապահովելու նրա խոսքի զարգացումը:

Ինչ վերաբերվում է ընթերցանության կազմակերպման և անցկացման խնդիրներին, ապա, ինչպես արդեն նշվել է ընթերցանության իրականացման խնդիրները խիստ փոխկապակցված են նպատակների հետ: Հավելենք, որ ընթերցանությունը հետապնդում է նախ լեզվական խնդիր, որի մեջ մտնում է աշակերտների բանավոր խոսքի հետևողական զարգացումը, որպես այն հիմքի նախապատրաստում, որի վրա բարձրանալու է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների հոյակապ շենքը՝ բանավոր ու գրավոր կանոնավոր ու անթերի խոսքը, լեզվի քերականության ու տրամաբանության յուրացումը: Այս տեսակետից ընթերցանության խնդիրներից մեկն էլ բառերի՝ մայրենի լեզվի բառային հիմնական ֆոնդի, իսկ մասամբ էլ՝ նրա բառագանձի ուսուցումն է: Հետևաբար, ընթերցանության դասերին տարվող բառային աշխատանքը նպատակ ունի ոչ միայն ճշտելու ու հետզհետե ընդարձակելու աշակերտի բառապաշարը և դրանով իսկ նպաստելու ընթերցած բնագրի յուրացմանը, այլև՝ բառապաշարի հարստացմամբ ապահովելու նրա խոսքի զարգացումը: Չմոռանանք խոսել կրտսեր դպրոցականների ինքնուրույն խոսքի դժվարությունների մասին, որոնք բացատրվում են խոսքային հիշողության չմշակվածությամբ, և դրա ձևավորումը դպրոցում ընթերցանության առձև դրված գլխավոր խնդիրներից մեկն է:

Ամփոփելով աշխատանքը, ևս մեկ անգամ հաստատենք երեխայի անձի ձևավորման, զարգացման, կայացման, հետագա ողջ կենսագործունեության վրա ընթերցանության ահռելի դերն և նշանակությունը, որի տեսական և գործնական հիմքերը դրվում են ուսուցման գործընթացի հենց առաջին իսկ քայլերից՝ տարրական դասարաններից:

Եզրակացություն

Ուսումնասիրելով աշխատանքի թեման և հիմնախնդիրները՝ հանգել ենք հետևյալ եզրակացության.

1. Մարդու անձի ձևավորման, մտավոր զարգացման, կայացման և հետագա ողջ կենսագործունեության հիմքերը դրվում են դեռ վաղ տարիքից, ուստի անչափ կարևոր է տարրական դասարաններում ուսուցման մեթոդիկաներն ու անցկացման տեխնոլոգիաները ընտրելիս հաշվի առնել երեխաների տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկություններն ու հնարավորությունների և պահանջմունքների համակարգը:

2. Տարրական դասարաններում ուսուցման հիմնական մեթոդիկան հենվում է մայրենի լեզվով ընթերցանության վրա, որտեղ շեշտը դրվում է կրթության և դաստիարակության հետ զուգահեռ ընթերցանության միջոցով երեխաների գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային, ազգային ու համամարդկային արժեքների ձևավորման գաղափարի վրա:

3. Ընթերցանությունը տարրական դասարաններում այն միակ ուղին է, որ տանում է ուսումնադաստիարակչական գործընթացի մանկավարժական հիմնախնդիրների լուծման բարձր դասարաններում դրանց հետագա արդյունավետ և հարթեցված ճանապարհի հարթեցման:

4. Կրտսեր դպրոցում ուսումնական գործընթացի ժամանակ ընթերցանությունը հետապնդում է այնպիսի փոխկապակցված նպատակներ ու խնդիրներ, ինչպիսիք են երեխաների իմացական գործընթացների զարգացումը, խոսքի և բառապաշարի ձևավորումը, արժեհամակարգի և բարոյական, գեղագիտական, գաղափարական կերպարի ձևավորումն ու զարգացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր, Զանգակ-97, 2009թ:
2. ԷդիյանԳ. Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923:
3. Ղարիբյան Ա. Ս., Մեթոդական ուղեցույց: Հայոց լեզվի և գրական ընթերցանության մասին: (Դպրոցական գործի ղեկավարների համար): Եր. – 1944:
4. Խաչատրյան Ս. Գ. ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ՝ ԸՍՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԻ:
5. Տեր Գրիգորյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976:
6. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980թ:
7. Левина В.А. «Когда маленький школьник становится большим читателем» М., 1994